

# Տրամաբանական նախադարձական երեխաների համար

## խնդիրներ տարիքի



1. Արամը մեծ ու քաղցր խնձոր կերավ, իսկ Աշոտը՝ մեծ ու թթու: Ի՞նչ նմանություն և տարբերություն կա խնձորների միջև:

Պատասխան

Նմանությունը՝ երկու խնձորն էլ մեծ էին: Տարբերությունը՝ մի խնձորը քաղցր էր, մյուսը՝ թթու:

2. Անին ու Աննան սկարներ էին նայում: Մեկը ամսագրի մեջ, մյուսը՝ գրքի: Ինչի՞ միջի սկարներն էր նայում Անին, եթե Աննան ամսագրի սկարները չէր նայում:

Պատասխան

Անին նայում էր ամսագրի միջի սկարները:

3. Սարոն ու Վահանը նկարում էին. մեկը տուն, մյուսը՝ տերևներով ճյուղ: Ի՞նչ էր նկարում Սարոն, եթե Վահանը տուն չէր նկարում:

Պատասխան

Սարոն նկարում էր տուն:

4. Կորյուկը, Աստղիկն ու Տրդատը գրքեր էին կարդում: Մեկը՝ ճամփորդության, մյուսը՝ տիեզերքի, իսկ երրորդը՝ սպորտի մասին: Ով ի՞նչ գիրք էր կարդում, եթե Աստղիկը չէր կարդում սպորտի և տիեզերքի մասին, իսկ Տրդատը՝ սպորտի մասին:

Պատասխան

Աստղիկը կարդում էր ճամփորդության մասին, Կորյուկը՝ սպորտի մասին, իսկ Տրդատը՝ տիեզերքի:

5. Սոնան, Մերին և Գոհարը ապրում էին տարբեր տներում: Երկու տները 3 հարկանի էին, իսկ մեկը՝ 2 հարկանի: Սոնան ու Գոհարը ապրում էին տարբեր տներում, Մերին ու Գոհարը ևս ապրում էին տարբեր տներում: Ով որտե՞ղ էր ապրում:

Պատասխան

Սոնան ու Մերին ապրում էին 3 հարկանի տներում, իսկ Գոհարը 2 հարկանի տանը:

6. Լևոնը Արամից բարձրահասակ է, իսկ Արամն ավելի բարձրահասակ է, քան Արսենը: Ո՞վ է ամենաբարձրահասակը:

Պատասխան

Ամենաբարձրահասակը Լևոնն է:

7. Ցանկապատի հետևում հավերը քուջուջ են անում: Ես այնտեղ 6 հավի ոտք եմ տեսնում: Քանի՞ հավ կա այնտեղ:

Պատասխան

3 հավ

8. Կարենը թիվ է մտապահել: Այն մեծ է 6-ից, բայց փոքր է 8-ից: Ի՞նչ թիվ է մտապահել Կարենը:

Պատասխան

7

9. Նկարիչը նապաստակ է նկարել: Այդ նապաստակն ուներ գլուխ, երկու ականջ և երեք ոտք: Արդյո՞ք ճիշտ է նկարել նապաստակին նկարիչը:

Պատասխան

Նկարը սխալ է, քանի որ նապաստակը չի կարող ունենալ երեք ոտք:

10. Արևիկը նստած է քառակուսի սեղանի մոտ: Ի՞նչ երկրաչափական պատկերի տեսք ունի սեղանը վերևից:

Պատասխան

Քառակուսի